

Փայտը շատ է, օգուտը՝ քիչ

Արցախը հարուստ է անտառներով: Անտառածածկ մասը գրավում է 138428 հեկտար տարածություն (չհաշված Շահումյանի շրջանը): Այժմ մարզի անտառներում կա ընդհանուր հաշվով 14 միլիոն խորանարդ մետր փայտ, որի վրա ամեն տարի ավելանում է եւս 155 հազար խոր. մետր: Դրանից 4 միլիոնը հասունացած է եւ կտրվելու ենթակա: Ամեն տարի կարելի է 50-55 հազար խոր. մետր փայտ ըստանալ անտառից եւ մեծ մասն օգտագործել կահույքի արտադրության մեջ: Հիմնական կտրելի ծառատեսակներն են հաճարենին եւ բոխին: Վերջինս բնակչությունը համարյա չի գործածում որպես շինանյութ:

Շտապներ ասել, որ անտառազետ մասնագետների խիստ պակասը թույլ չի տալիս փայտանյութի եւ անտառի ճիշտ օգտագործումը հասցնել մասնագիտական բարձր մակարդակի: Մարզում կան ընդամենը 15 անտառազետ, որոնցից միայն 5-ը ունեն բարձրագույն կրթություն:

Բարձրորակ մասնագետների առկայության դեպքում հաջողությամբ կօգտագործվեն ու կմշակվեն նաեւ ընկուզենիները, որոնց քիվը տարեցտարի ավելանում է նոր տնկատարածությունների հաշվին: Օրինակ՝ Հաղրուքի (Դիզակ) շրջանում վերջին տարիներին տարեկան տնկվում է 3000 ընկուզենի, բայց մեծ մասը չորանում է: 1990 թվականի տնկիների 40 տոկոսն է միայն մնացել (ի դեպ, մասնագետների համար հանելուկ է մնացել նաեւ այն, որ 1990 թվականին մարզի ընկուզենիները բացարձակապես պտուղ չեն տվել):

Կա ամենազլխավորը՝ հումքը: Բայց խիստ սահմանափակ են դրա օգտագործման հնարավորությունները, որոնց հաղթահարման ուղղությամբ էլ հենց պետք է աշխատել միավորելով գործինաց ուժեր:

Կորելի ծառերը շատ են անանց տեղերում, դրանց հասնելու համար պետք են ուղղաթիւ, քուլդոզեր եւ տրակտոր: Ձրկան քիչ թե շատ բարվոք ճանապարհներ, որպեսզի անտառանյութը բերվի մարզային կահույքի ֆաբրիկա: Ձկա փայտանյութը պահեստավորելու հնարավորություն, չկա ճանապարհային շինարարության համար անհրաժեշտ պայքեցման կետ (արգելվում է դա հատուկ դրության արցախյան պայմաններում): Դրան ավելացնենք նաեւ մրշտական վտանգը: Այսօր ամենաանվը-

տանգ տեղերից են Մառտունու շրջանի Ավետարանցի, Կարմիր շուկայի, Խնձորիստանի անտառատարածքները:

Տարիներ շարունակ Ստեփանակերտի կահույքի ֆաբրիկան հումքը ուտացնել է դրսից: Արեւմտյան Ռեկրախնայից, Ռուսաստանի հետախոր մարզերից մեծ ծախսերով մարզային կահույքի ֆաբրիկա է բերվել փշտեղենի, կազմու, ընկուզենու, քիկու, հաճարենու, հացնու փայտ: Ըրը-շափակման պատճառով կահույքագործմն-



որ 1990-91 թթ. ծանրաբեռնված են ընդամենը 24-35 տոկոսով: Հաճախ որևէ արտադրամաս երկար ու հարկադիր պարապուրդի է մատնվում: Իսկ լրիվ ծանրաբեռնվածությամբ աշխատելիս՝ արտադրանքի 80 տոկոսը կարող են արտահանել՝ 20 տոկոսը տրամադրելով մարզին եւ բավարարել տեղի բնակչության պահանջները:

Կահույքի գործարանը եւս անտառատնտեսության նման ունի քաղցնաքիվ իտղունդոտներ, որոնք հաղթանաբերելով կարելի է ներդաշնակորեն համադրել նրկուսի աշխատանքային հնարավորությունները:

Ժամանակին դրոժի մեջ հայրենակիցներից եկած օգնությանը (որն այժմ էլ շարունակվում է) հիմնականում փոշեցրել է եղել, որովհետեւ բաշխվել է առանց համակարգի եւ առանց զատողոշելու զբլխավորը երկրորդականից: Պետք է անպայման վերանայել մարզին ուղարկվող օգնության ձևերը, այն էլ բոլոր ոլորտներում:

Կոմերտ՝ անտառների եւ փայտանյութի

օգտագործման պարագայում պետք է մարզին օգնել մարզից դուրս բարձրորակ մասնագետներ (անտառազետ, կահույքագործ) պատրաստելով, միջազգային ըստանդարտին հարմարապես, նորափոք գործիքներ տրամադրելով, բարձրարժեք հաստոցներ հայտնաբերելով, փոխափակել կապեր ստեղծելով եւ այլն: Այդ ամենի կյարիքն այսօր իրիստ զգացվում է: Պլան նույնիսկ որակյալ սղոցներ ո՛չ անտառահատման, ո՛չ կահույքի փայտը գործարանում կտրուկու համար: Պլան նորատախտակի (ֆաներայի) հաստոցներ, որոնք բողարկվում են միայն Չինաստանից: Եւ ծապրուկուսում, հարյուր հազարավոր դոլլարները արժեք ունեն եւ անձեռնմխելի են տնտեսապես ու նյութապես քայքայված, քայք հարուստ հնարավորություններ ունեցող մարզի համար (եւ կահույքագործները գիտեն, որ իրենց արտադրանքի երկասպատումը լրիվ կախված է նման հաստոցներից, որակն ապահովվում է հատկապես բարձրորակ նրբատախտակով):

Արցախի անտառտնտեսությունը, որը 1991թ. հունվարի 1-ից միացել է Երեսանի



անտառտնտեսության վարչության հետ, հոգանքի մեջ է եւ պատրաստ է աշխարհի բոլոր ժայրներում գտնվող հայրենակիցների տրամադրել անտառային մեծ տարածքներ՝ պայմանագրային օգտագործման եւ տնտեսական ազատ գործունեություն ծավալելու համար:

Այսօր շրջափակում է: Ժամանակ եւ անհրաժեշտության կա հաշվարկելու ամեն ինչ, ստեղծելու նախադրյալներ, կընքնելու պայմանագրեր՝ ապոխճանաբար Արցախի տնտեսությունը ճգնաժամից դուրս ցնցելու համար:

Այլապես՝ ճանապարհները բացվելուց հետո սոխակած կլինենք իզուր տեղը շատ ժամանակ վատնել: Պետք չէ դանդաղել: